Կարգապահական գործ թիվ ԿԳ-23013

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՇԵՂ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի և Կարինե Բաղդասարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մուշեղ Գառնիկի Վարդանյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2829), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Գագիկ Սանթրոսյանը (այսուհետ՝ նաև Դիմող), դիմելով Պալատ, հայտնել է, որ 06.06.2022թ-ին և 10.07.2022թ-ին «ԼՕԵՔՍ» ՍՊԸ-ի հետ կնքել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր՝ թվով երկուսը:

Վերոհիշյալ երկու պայմանագրերի 1.3 կետերի համաձայն՝ ծառայությունները իրականացնում է փաստաբան Մուշեղ Գառնիկի Վարդանյանը:

Դիմումին կից Դիմողը ներկայացրել է վերոհիշյալ երկու ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի պատճենները, ինչպես նաև վճարման անդորրագրերի պատճենները որպես ապացույց՝ իր կողմից ծառայությունների մատուցման պայմանագրերով ստանձնած վճարման իր պարտականությունների ժամանակին և ամբողջ ծավալով կատարված լինելու վերաբերյալ:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանի կողմից որևէ գործողություն չի կատարվել պայմանագրերով ստանձնած իր հանձնարարությունները կատարելու համար, Դիմողին չի տրամադրվել պատշաճ իրավաբանական օգնություն, ինչպես նաև Դիմողի կողմից Փաստաբանի ծառայություններից հրաժարվելուց հետո Դիմողին չի վերադարձվել հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 18.04.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողի կողմից որևիցե ապացույց չի ներկայացվել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Գագիկ Սանթրոսյանի դիմումի վերաբերյալ, սակայն փաստաբանի կողմից որևէ բացատրություն չի ներկայացվել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 18.04.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Նշվածին ի պատասխան՝ Փաստաբանը 28.04.2023թ.-ի գրությամբ հայտնել է, որ իր և Դիմողի միջև կնքված պայմանագրերով հստակ նշվել են իրեն տրվող հանձնարարությունները և իր կողմից կատարման ենթակա աշխատանքների վարձատրությունների չափերը, ինչպես նաև դրույթներ այն մասին, որ տրված հանձնարարությունից հրաժարվելու դեպքում՝ տրված գումարը վերադարձման ենթակա չէ:

Փաստաբանը նշել է, որ 06.06.2022թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ինքը պետք է իրականացներ խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում կազմեր և ձևակերպեր անհրաժեշտ փաստաթղթեր՝ մասնավորապես քրեական գործի շրջանակներում կատարեր անհրաժեշտ գործողություններ, ներկայացուցչություն հետաքննության փուլում: Փաստաբանի պնդմամբ, իր կողմից պատշաճ կատարվել են ստանձնած պարտականությունները, իսկ դրանց դիմաց վճարված գումարը ներառել է նաև ճանապարհածախսի ու այլ ծախսերը, քանի որ Փաստաբանը Դիմողի իրավունքների պաշտպանության նպատակով մեկնել է Կապանից Դիլիջան և վերադարձել Կապան:

Անդրադառնալով 17.02.2022թ. կնքված պայմանագրին՝ Փաստաբանը նշել է, որ ստանձնել էր Դիմողի շահերի պաշտպանությունը իրականացներ խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում կազմեր և ձևակերպեր անհրաժեշտ փաստաթղթեր՝ մասնավորապես թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործի շրջանակներում խորհրդատվություն ու պաշտպանություն դատաքննության փուլում: Փաստաբանի պնդմամբ իր կողմից պատշաճ կատարվել են իր պարտականությունները՝ այդ թվում, կազմվել է միջնորդություն, պաշտպանական ճառի սևագիր տարբերակ, ինչի մասին ևս տեղեկացված էր Դիմողը:

Փաստաբանը հավելել է, որ թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործի մի քանի դատական նիստեր հետաձգվել են ոչ իրենց կողմից, իսկ կայացած դատական առաջին իսկ նիստով Դիմողը հայտարարել է, թե չի ցանկանում, որ Փաստաբանը այդ գործով ներկայացնի իր իրավունքներն ու շահերը և հրաժարվել նրա ծառայություններից, սակայն որևէ պահանջ չի ունեցել գումարը վերադարձնելու մասով:

Փաստաբանը հայտնել է, որ, ելնելով իրեն տրված հանձնարարության ծավալի

անճշտությունից, նախատեսվել էր միջին հոնորարի չափ, որը էականորեն նվազ է նմանատիպ գործերով հոնորարների չափերից:

Փաստաբանի պնդմամբ, այդ ժամանակաընթացքում Դիմողի կողմից տրվել է մեկ այլ հանձնարարություն՝ թիվ ՏԴ/0111/01/22 քրեական գործով նրա իրավունքներն ու շահերը ներկայացնելու վերաբերյալ, որը ևս բարեխղճորեն իրականացվել է:

Փաստաբանը նշել է, որ ներկա դրությամբ որևէ հանձնարարությամբ Դիմողի նկատմամբ չկատարված պարտավորություններ չունի, քանի որ համաձայն պայմանագրերի՝ իր կողմից ձեռնարկվել են նրա շահերի պաշտպանությանն ուղղված բոլոր ողջամիտ միջոցները, որոնց մի մասը չի իրականացվել Դիմողի անհամաձայնության, ապա և՝ Փաստաբանից հրաժարվելու պատճառով: Փաստաբանի խոսքերով, իր կողմից կատարվել են կանխատեսելիության առումով գրեթե բոլոր նախապատրաստական գործողություններն ու աշխատանքները, որոնք բավարար էին, որպեսզի ամեն պահի քրեական գործով պատշաճ պաշտպանությունն իրականացվի և ավարտին հասցվի:

Փաստաբանը նար հավելել է, որ հետաքննության փուլում ավարտված գործը, ինչպես նաև՝ դեռևս դատարանում քննության առնվող՝ անավարտ թիվ ՏԴ/0037/01/21 և թիվ ՏԴ/0111/01/22 քրեական գործերը օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում, և ինքը չի կարող ներկայացնել դրանք: Բացի այդ, Փաստաբանը հայտնել է, որ կնքված պայմանագրերով որոշված այն դրույթը, որի համաձայն Դիմողի կողմից Հանձնարարություններից հրաժարվելու դեպքում վճարված գումարը չի վերադարձվում:

Նշված գրությանը կից Փաստաբանի կողմից ներկայացվել են՝ թիվ ՏԴ/0037/01/21 և թիվ ՏԴ/0111/01/22 քրեական գործերի վերաբերյալ փաստաթղթեր:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 14.03.2023թ. թիվ 76-Ա/ԿԳ-23013 որոշմամբ փաստաբան Մուշեղ Վարդանյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2 և 3.8.4 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

20.03.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 22.05.2023թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 22.05.2023թ.:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ Փաստաբանը պայմանագրերի շրջանակներում ըստ էության ամբողջ ծավալով չի կատարել իր պարտականությունները:

Հանձնաժողովի նիստերը տեղի է ունեցել 27.07.2023թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը երկու քրեական գործերի շրջանակներում: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև 06.06.2022թ. և 10.07.2022թ. կնքված պայմանագրերով:*

2. Դիմողը վճարել է Փաստաբանին ծառայությունների մատուցման երկու պայմանագրերի գումարը՝ ընդհանուր 850.000 ՀՀ դրամ: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացված վճարման անդորրագրով:*

3. Չնայած նրան, որ Փաստաբանը պայմանագրերի շրջանակներում ըստ էության ամբողջ ծավալով չի կատարել իր պարտականությունները, այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետը փաստացի հղում է կատարում փաստաբանի և վստահորդի միջև կնքված պայմանագրին: Այսպիսով, Փաստաբանի և Դիմողի միջև կնքված պայմանագրերի 2.2 կետի «ե» պարբերությամբ նախատեսված է պայմանագիրը լուծելու դեպքում վճարված գումարը ենթակա չվերադարձնելու դրույթը: Նման պայմաններում, Փաստաբանի կողմից փաստացի չկատարված աշխատանքի դիմաց վճարված գումարը Դիմողին չվերադարձնելու հարցը գտնվում է Կանոնագրքի կարգավորման տիրույթից դուրս: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 06.06.2022թ. և 10.07.2022թ. կնքված պայմանագրերով:*

4. Դիմողի և Փաստաբանի միջև 06.06.2022թ. և 17.02.2022թ. կնքված պայմանագրերը լուծվել են, իսկ Փաստաբանի լիազորությունները դադարեցվել են: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի կողմից տրամադրված բացատրություններով: Ավելին, նշված հանգամանքը նաև չի հերքվել Փաստաբանի կողմից:*

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված չի համարում հետևյալ փաստերը.

1. 06.06.2022թ. կնքված պայմանագրի համաձայն՝ Փաստաբանը պետք է իրականացներ խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում կազմեր և ձևակերպեր անհրաժեշտ փաստաթղթեր՝ մասնավորապես քրեական գործի շրջանակներում կատարեր անհրաժեշտ գործողություններ, ներկայացուցչություն հետաքննության փուլում, իսկ 17.02.2022թ. կնքված պայմանագրի համաձայն՝ կազմեր և ձևակերպեր անհրաժեշտ փաստաթղթեր՝ մասնավորապես թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործի շրջանակներում խորհրդատվություն ու պաշտպանություն դատաքննության փուլում:

Նշվածի կապակցությամբ Փաստաբանի կողմից ներկայացվել է թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործով միջնորդություն /քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ/ և պաշտպանական ճառի սևագիրը՝ պարզաբանելով, որ ինքը նշված պայմանագրերի

շրջանակներում կատարել է անհրաժեշտ բոլոր գործողությունները, սակայն չի կարող ներկայացնել դրանցից նյութեր, քանի որ հետաքննության փուլում ավարտված գործը, ինչպես նաև՝ դեռևս դատարանում քննության առնվող՝ անավարտ թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործը օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում:

Այնուամենայնիվ նշվածից բացի, գործում առկա չէ որևէ ապացույց Փաստաբանի կողմից նշված պայմանագրերի շրջանակներում այլ գործողություններ կատարելու վերաբերյալ, իսկ ներկայացված փաստաթղթերը (թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործով՝ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն) ստորագրված չեն և բավարար չեն ծառայությունների մատուցման հանգամանքը հաստատելու համար:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մուշեղ Վարդանյանը փաստաբան է հանդիսանում 05.08.2020թ. թվականից, և 2020-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մուշեղ Վարդանյանի նկատմամբ 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 և 2.7.2 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

7.1. Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Այդ կապակցությամբ, փաստաբանի համար Կանոնագրքով սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, պարտականությունը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են

վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբանի և Դիմողի միջև կնքված **06.06.2022թ. պայմանագրի համաձայն՝** *Փաստաբանը պետք է իրականացներ խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում կազմեր և ձևակերպեր անհրաժեշտ փաստաթղթեր՝ մասնավորապես քրեական գործի շրջանակներում կատարեր անհրաժեշտ գործողություններ, ներկայացուցչություն հետաքննության փուլում*, իսկ **10.07.22թ. կնքված պայմանագրերի համաձայն՝** *կազմեր և ձևակերպեր անհրաժեշտ փաստաթղթեր՝ մասնավորապես թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործի շրջանակներում խորհրդատվություն ու պաշտպանություն դատաքննության փուլում:*

Միաժամանակ, դիմումում նկարագրված հանգամանքներն ըստ էության վերաբերում են Փաստաբանի գործողություններին թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործի շրջանակներում, որոնք իրականացվել են 10.07.2022թ. հետո:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ չնայած Դիմողը հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից թիվ ՏԴ/0037/01/21 քրեական գործի ընթացքում, այնուամենայնիվ, վերջինիս կողմից չի ներկայացվել որևէ որոշակի ապացույց առ այն, թե կոնկրետ երբ է Դիմողը բացահայտել Փաստաբանի ենթադրյալ վարքագիծը և փաստացի երբ է հրաժարվել նրա ծառայություններից: Նշված փաստերի բացակայության պայմաններում հնարավոր չէ քննարկել Փաստաբանի կողմից իր վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններին կամ դրանց արդյունավետությունը:

Ավելին, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Փաստաբանի ծառայություններից հրաժարվելու պայմաններում հնարավոր չէ քննարկել դրանց ամբողջ ծավալով կատարված լինելու հարցը, իսկ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող դիտարկվել որպես բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու առերևույթ դրսևորում, քանի որ Դիմողի կողմից հիմնավոր կասկածից վեր չափանիշով պայմանավորված չի ներկայացվել որևիցե ապացույց:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև գործում առկա ապացույցները իրենց համակցությամբ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանին վերագրվող Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջի խախտման մասով բացակայում են դրա առերևույթ հատկանիշները, որպիսի պայմաններում էլ հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

7.2. Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ ի թիվս այլնի, վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Ներկայացված նորմի, ինչպես նաև վերը հիշատակված Օրենքի կարգավորումների վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ դրանցով սահմանված են որոշակի

վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Հարկ է հավելել, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետն իր հերթին, փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում որոշակիություն և կանխատեսելիության համատեքստում՝ որպես իրավական երաշխիք՝ ի թիվս այլնի, նախատեսում է պայմանագիրը լուծելիս որոշակի գործողություններ փաստացի կատարված չլինելու դեպքում հոնորարի մի մասը վերադարձնելու փաստաբանի պարտավորությունը, ***եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:***

Այլ կերպ ասած, Կանոնագրքի նշված դրույթի կարգավորման կիրառման համար անհրաժեշտ է որոշակի վավերապայմանների միաժամանակյա առկայությունը՝ մասնավորապես,

1. *Փաստաբանի և վստահորդի միջև* ***պայմանագիրը լուծված լինելը,***
2. *Փաստաբանի կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում* ***որոշակի գործողություններ կատարված չլինելը,***
3. *վճարված գումարը վերադարձնելու* ***հարցը պայմանագրով կարգավորված չլինելը****:*

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Դիմողը հրաժարվել է Փաստաբանի հետագա ծառայություններից, ինչից հետո պահանջել է վերադարձնել պայմանագրերով վճարված գումարը:

Միաժամանակ, անդրադառնալով կարգապահական վարույթի շրջանակներում ներկայացված Դիմողի և Փաստաբանի կողմից վկայակոչված Պայմանագրի կարգավորումներին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ դրանում առկա դրույթները փաստացի կարգավորում են պայմանագիրը լուծելու դեպքում, գումարի վերադարձմանը վերաբերող հարցերը:

Մասնավորապես, նշված հարցն ուղղակիորեն կարգավորված են Դիմողի և Փաստաբանի միջև կնքված երկու **պայմանագրերի 2.2 կետի «ե» պարբերությամբ, որի համաձայն՝** *Կատարողն իրավունք ունի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ առանց ծառայության գումարը հետ վերադարձնելու …, եթե Պատվիրատուն … կամավոր /իր ցանկությամբ/ հրաժարվում է Պայմանագրից…:*

Այս համատեքստում, Դիմողի կողմից Փաստաբանի հետագա ծառայություններից հրաժարվելու պայմաններում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ

Կանոնագրքի 3.8.4 ենթակետով ամրագրված պահանջի պահպանման հարցի քննարկումն ըստ էության դուրս է գալիս Կանոնագրքի կարգավորման տիրույթից, քանի որ առկա է նշված կանոնի կիրառումը բացառող պայմանը: Այսինքն, Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագրի շրջանակներում նշված հարցի կարգավորված լինելն, արդեն իսկ բացառում է Փաստաբանի վարքագծում այդ ենթակետով սահմանված խախտման հատկանիշների առկայության կամ բացակայության քննարկման հնարավորությունը:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի կարգավորման կիրառման տրամաբանության ներքո բացակայում են դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը, որպիսի պայմաններում էլ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքներին և Փաստաբանի արարքի գնահատմանը անդրադարձ չի կատարվում և դրանք ենթակա չեն քննարկման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում է փաստաբան **Մուշեղ Գառնիկի Վարդանյանին** կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մուշեղ Գառնիկի Վարդանյանին (արտոնագիր՝ թիվ 2829) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 և 2.7.2 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23013 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23013-2-Ա
27 հուլիսի 2023թ.
ք.Երևան